ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 709 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 487-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 07610657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի օգոստոսի 7-ի «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 487-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Եռյակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01523512) 2026 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ՄԱ-ԱՊՁԲ-26/07 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դիզելային, շարժիչի, փոխանցման տուփի, հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղերի, հակասառեցուցիչ նյութերի ու ավտոմեքենաների յուղի, օդի զտիչների ձեռքբերում՝ 928,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սոլար Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02285107) 2026 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-26/04 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային ֆոտովոլտային էներգահամակարգի ձեռքբերում՝ 2,083,333.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

28.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ